



«ԱՐԱՐԱՏ»Ի ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ

Վերջացնելով «Արարատ»ի տարեշրջանը, պարտք եմ համարում մի քանի խօսքով փարատել այն տա սկուսանքը, որ ընթերցողներն ունեցան մեշուշտ նորա անկանոն հրատարակութեան պատճառով: — Ինչպէս յայտնի է, 1900 թ. յունուարից «Արարատ»ի խմբագիր նշանակուեցաւ Տ. Գարեգին վարդ. Յովսէփեան, որ այդ պաշտօնի մէջ էր մինչեւ 1901 թ. մայիս ամիսը, երբ Թիֆլիսի կոնսիստորիայի նախանգամ կարգուեցաւ, եւ նորա հեռանալով խմբագրութեան գործը երեսի վերայ մնաց: Իբրեւ նախկին խմբագիր, որ նաեւ Տ. Գարեգին վարդապետի օրով մի երկու ամիս փոխանակել էի նորան, երբ նա իւր հիւանդութիւնը դարձանելու համար քացակայել էր Մ. Աթոռից՝ յանձն առայ յօժարակամ շարունակելու մի կերպ նորա գործը, մինչեւ նոր խմբագրի նշանակուիլը, եւ ամառուայ արձակուրդներին մայիս — օգոստոս համարները երկու տետրակի մէջ ամփոփելով հրատարակելի: Բայց ուսումնական տարին վրայ համնելուց յետոյ եւս հնար չունէի այլ եւս կողմակի գործերով զբաղուելու: Վաղօրօք դիմել էի ուր հարկն է եւ տնօրէնութիւն խնդրել, եւ թէպէտ փորձեր եղան նոր խմբագրութիւն հաստատելու, սակայն Վեհափառ Հայրապետի Մ. Աթոռից քացակայելուն եւ ուրիշ հանգամանքների շնորհիւ խնդիրը ձգձգուեցաւ, մինչեւ որ դեկտեմբեր ամիսին Նորին Վեհափառութիւնը քարհամեց սրբ. կոնդակով խմբագիր կարգել նոր տարեշրջանի համար Մ. Աթոռի միաբան Ծնորհ. Գալուստ Տէր Մկրտչեանին, եւ ապա նորա գործակից ժեմարանի ուսուցիչ պ. պ. Մ. Տիգրանեանին եւ Յ. Մանանդեանին — պարտաւորեցնելով ինձ միանգամայն իւրոյ ընծայելու անցնող թուականից պակաս մնացած համարները: Եւ ահա այդ

պարտքը կատարուած՝ այնպէս, որ թէպէտ ժամանակից շատ ուշ եւ կրկին չորս ամիսը երկու տետրակի մէջ ամփոփելով ընթերցողներին տրուում է այնուամենայնիւ «Արարատ»ի ամբողջ տարեշրջանը, զրեթէ նախկին տարիների ծաւալով:

Աւելորդ կէիներ ներկայ հանգամանքներում ընթերցողների ներողամտութիւնը խնդրել տեղի ունեցած անկանոնութեան համար, բայց կարծում ենք, որ եթէ նոքա ուղիղ կերպով կշռադատեն խնդիրը՝ այդ հանգամանքը նոր պատճառ չեն համարի իրենց, առանց այն էլ սառն, վերաբերմունքը դէպի Մ. Աթոռի պաշտօնական թերթն աւելի եւս պաղեցնելու: Հակառակ վերջին տարիներն գործ դրուած լուրջ ջանքերին՝ բովանդակւից, հետաքրքրական եւ օգտակար դարձնելու «Արարատ»ը, քարեմիտ մարդիկ շարունակեցին մեծ եռանդով հաւատացնել, թէ նորա թերթերը մնում են եւ պէտք է մասն առանց կտրուուելու. եւ թէպէտ նոքա յաջողութիւնը այնպիսի ջրջաններում էր միայն, որոնք սովոր են ուրիշի աչքով նայել եւ շոնսածի մասին դատողութիւն ու վճիռ տալ, մինչ թուն իրողութիւնը տեսնողներն ու գնահատողները անպակաս էին անշուշտ, սակայն կարելի էր եւ խիստ ցանկալի, որ նոքա չափաւորեն վերջապէս եւ աւելի զեղեցիկ նպատակների համար գործ դնեն իրենց եռանդը: «Արարատ»ի նոր խմբագրութեան ծնող անցնելովն այդ անտեղի նախանձախնդրութիւնը գրգռող մի քանի հիմնական պատճառներ վերանում են: Թող ուրեմն գոնէ այսուհետեւ ընդհանրամայ այն սկզբունքը, թէ ինչպէս Մ. Աթոռը, այնպէս եւ նորա պաշտօնական հրատարակութիւնը՝ մի կամ մի քանի անհատների սեփականութիւնը չէ, այլ մի ընդհանրական, կարելի է ասել համագային, եւ մասնաւորապէս ամբողջ հայ եկեղեցականութեան գործ. ուստի եւ ամէն հայի մասնաւոր թէ Հայ. եկեղեցւոյ ամէն մի պաշտօնէի, պարտքն է նպատակել նորա քարգաւաճմանը, զօրացմանն ու տարածմանը՝ ի հոգեւոր եւ ի բարոյական կրթութիւն, յեկեղեցական եւ յազգային ինքնամանաշութիւն հայ ժողովուրդի:

որին այնքան պէտք ունի սա: — Յաջողութիւն այս իմաստով «Արարատ»ի նոր տարեշրջանին: նորա նոր խմբագիրներին եւ աշխատակիցներին:

Կ. Վ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ

Վեհափառ Հայրապետը նոյեմբերի 1-ին, Կարսի երկաթուղու գիշերուայ գնացքով, մեկնեց Թիֆլիսից զէպի Աղէքսանդրապոլ, ուր երկու օր մնալուց յետոյ, Երեւանեան երկաթուղու նորակառոյց գծի վերայ առանձին գնացքով, նոյեմբեր 4-ին ժամանեց Մայր Աթոռ: Վարժուէն կայարանի մօտ Ն. Վեհափառութեան ընդ առաջ էին ելել Մայր Աթոռի միաբաններէից Գեր. Յովհաննէս եւ Ղեռնդ եպիսկոպոսները, Արժ. Բաղարատ Գ. Թաւաքալեան, Մխիթար, Կարապետ, Յուսիկ եւ Եղնիկ վարդապետները:

Տիֆլիսից եւ Աղէքսանդրապոլից Նորին Վեհափառութեան ուղեկցում էին՝ Տ. Սահակ եւ Տ. Գաբրիէլ եպիսկոպոսներ, Տ. Սահակ Բաղդասարեան, Տ. Կիւրեղ, Տ. Տիւրայր, Տ. Կորիւն եւ Տ. Մատթէոս վարդապետներ:

Նորին Վեհափառութեան հետեորդներէից Գեր. Գարեգին եպիսկոպոս եւ Տ. Կիւրեղ վարդապետ մի քանի օր յետոյ վերադարձան իրենց պաշտօնատեղիները (Սանահին եւ Կարս). Տ. Սահակ վարդապետ Բաղդասարեան նշանակուեցաւ վանահայր Ագուլեաց ս. Թովմա առաքելոյ վանքի եւ վերահսկող շրջակայքի ուխտատեղեաց, եւ գնաց Վ. Ագուլիս. Տ. Տիւրայր վարդապետ Աղէքսանդրապոլի վիճակի փոխանորդ կարգուեց, ուր եւ զիմեց նոյեմբերի վերջին. Գեր. Սահակ եպիսկոպոս Այվատեան արքեպիսկոպոսութեան բարձր աստիճան ստացաւ եւ նշանակուելով Պարսկաստանի եւ Հնդկաստանի առաջնորդ՝ մեկնեց զէպի Թեհրան:

Տ. Մեսրոպ վարդապետ, Մ. Աթոռի մատենադարանում իւր շարադրութեան համար հարկաւոր նիւթերը ժողովելուց յետոյ՝ ուղեորուեցաւ զէպի Ս. Պետրոսը, մագիս-

տրոսութեան աստիճան ստանալու համար:

Կարճ ժամանակով Մ. Աթոռ եկան Բագուի եկեղեցեաց գործակալ Տ. Աբսէն վարդապետ եւ Սպահանի առաջն. փոխանորդ Տ. Բաղարատ վարդապետ Վարդապարեան: Տ. Աբսէն վարդապետ վերադարձաւ Բագու, իսկ Տ. Բաղարատ վարդ. պաշտօնական գործով Մոսկուա գնաց, որտեղից վերադառնալով պէտք է երթայ կրկին իւր պաշտօնատեղին:

Մ. Աթոռ եկաւ նաեւ Ն. Բայազիտի եւ Գարաշիշապի գործակալ Տ. Թովմա վարդապետ, որ Ղլարի առաջն. փոխանորդ կարգուելով՝ գնաց այս նոր պաշտօնին:

Իսկ փոխարէնը Մուրադբէկեան Աղէքսանդր սարկաւադ՝ Սեանայ վանքը գնալով եւ Գեր. Սարգիս եպիսկոպոսից կուսակրօն քահանայ ձեռնադրուելով, Ն. Բայազիտի գործակալ է նշանակուել:

Մ. Աթոռի տպարանի տեսուչ եւ ձեմարանի ուսուցիչ Տ. Եղնիկ վարդապետ հրաման ստացաւ նոյեմբեր ամսին Նորին Վեհափառութիւնից երկու շաբաթով Թիֆլիս գնալու եւ լուղի զննելու աստուածաշունչի համար, որի տպագրութիւնը շուտով պէտք է ձեռնարկուի:

Երեք տարի Խարկովում իրաւարանութեան գաղափարութիւններ լսելուց եւ նոյն տեղում գտնուած հայերին հովուելուց յետոյ Մ. Աթոռ վերադարձաւ Տ. Բարդէն վարդապետ:

Վերադարձաւ նաեւ Շնորհ. Կոստանդին սարկաւադ, որ խոչընդոտների հանդիպեց՝ Մոսկուայի Գիւղասնական ինստիտուտը մանկ կամենալով:

Վերադարձան՝ Գեր. Յուսիկ եպիսկոպոս, որ Վեհափառ Հայրապետի առանձին յանձնարարութիւններով Մոսկուա էր գնացել, եւ Տ. Հմայեակ վարդ. Արշարունի, որին Տիֆլիսի Գատաստ պալատը արդարացրեց նորա վերայ բարդուած մեղադրանքներէից:

Գեկտ. 19 Մ. Աթոռ ժամանեց Գեր. Գէորդ արքեպիսկոպոս Սուրենեան: Նորին Բ. Սրբազնութեան ընդառաջ էին գնացել Ղարձուի կայարանը Տ. Բաղարատ վարդ. Գ. Թաւաքալեան եւ Տ. Կորիւն վարդապետ:

Ս. Ստեփաննոսի տօնին Վեհափառ Հայ-